

ՍԵՐՈՎԲԵ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՍԱՅԻ ՆՉԵՑՈՒ ԹՂԹԵՐԸ

Եսայի Նչեցին (1260—1338) ԺԳ դարի վերջին քառորդի և ԺԴ դարի Ա կեսի հայ իրականության նշանավոր դեմքերից մեկն է՝ իբրև մանկավարժ, եկեղեցական գործիչ և մատենագիր:

Նրանից մեզ է հասել հարուստ մատենագրական ժառանգություն, այդ թվում՝ «Մեկնութիւն Եկեկիելի»[1], «Մեկնութիւն քերականի»[2], «Լուծմունք Դիոնիսիոս Արիսպագացւոյ Յաղագս երկնային քահանայապետութեանց»[3], «Դաւանութիւն և խոստովանութիւն ի Սուրբ Երրորդութիւն...»[4], «Սուղ ինչ պատճառ ձեռնադրութեան քահանայի»[5], «Յաղագս կարգաց եկեղեցւոյ»[6], «Յաղագս եկեղեցւոյ խորհրդեան»[7], քարոզներ[8], թղթեր և այլն:

Մեր այս հոդվածի նպատակն է ներկայացնել Եսայի Նչեցու թղթերը:

1. Թուղթ վասն կարգաց եկեղեցւոյ և ժամուց[9].

Սույն թուղթը մի արժեքավոր գրություն է Հայ Եկեղեցու ժամակարգության պատմության, ինչպես նաև եկեղեցական ջենքի (տաճարի) բաղկացուցիչ մասերի խորհրդապաշտության վերաբերյալ: Նչեցին այս թուղթը գրել է Սյունյաց վարդապետների և վանահայրերի խնդրանքով, որոնք ցանկացել են հստակ տեղեկություններ ստանալ Հայ Եկեղեցու ժամակարգության մասին:

---

[1] Գրել է 1303 թ. Ստեփանոս արք. Օրբելյանի խնդրանքով: Հիմնվել է Որոգինեսի, Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Եփրեմ Ասորու, Ստեփանոս Սյունեցու և այլ համապատասխան մեկնությունների վրա: Երկն անտիպ է: Մեզ է հասել ավելի քան 30 ձեռագրով (տես Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 5566, 5717, 5906, 6573, 6730, 10083 և այլն): Սույն երկի մասին հանգամանորեն տես **Գարեգին արք. Հովսեփյան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մեջ, հտ. Բ, Երուսաղեմ, 1942, էջ 269—273:

[2] Տես **Լ. Գ. Խաչերյան**, Եսայի Նչեցի, Վերլուծություն քերականության, Երևան, 1966 թ.:

[3] Տես Մատենադարանի №№ 1919, էջ 98ա—118ա, 57, 167, Երուսաղեմի 718, էջ 261—326 և այլն:

[4] Տես Մատենադարանի №№ 8389, էջ 13ա—21ա, 614, 7255, 1043, 1337, 1476, 2283, 3192 և 4063:

[5] Տես Մատենադարանի №№ 3937, էջ 133ա—139ա, 3276, էջ 99ա (թերի), 1098, էջ 218բ—231բ և այլն:

[6] Տես Մատենադարանի № 3276, էջ 99ա—104բ:

[7] Տես Մատենադարանի № 9622, էջ 754—772, Երուսաղեմի № 69 և 1279:

[8] Տես Մատենադարանի № 9622, 1098, 1387 և Երուսաղեմի №№ 69, 1279 և այլն:

[9] Տես Մատենադարանի №№ 5154, էջ 259ա—261ա, 1326, 1327, 1548, 2608, 4135, 4137 և այլ ձեռագրերը: Սույն տեքստը որոշ տարբերություններով տպված է Խուսրով Անձևացու «Գիրք որ կոչի Մեկնութիւն Աղօթից» (Կ. Պոլիս, 1730) գրքի վերջում իբրև հավելված, էջ 422—426:

Ըստ Եսայի Նչեցու, Հայ Եկեղեցու ժամերգությունները յոթն են, մի թիվ, որ հիմնված է Դավիթ մարգարեի հետևյալ խոսքի վրա. «Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ» (Սաղմ. ՃԺԸ 164): Ժամերգությունների կատարման ժամերը պատահական չեն ընտրվել, այլ դրանք առնչվում են մարդկության պատմության և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հետ կապված կարևոր դեպքերի հետ: Այսպես.

Երրորդ ժամին տեղի ունեցավ մարդու առաջին ախտանալը՝ երբ Եվան լսեց օձի մահաբեր խրատը:

Նույն երրորդ ժամին Քրիստոս Պիղատոսից մահվան վճիռ ստացավ՝ խաչվելու:

Երրորդ ժամին կատարվում է Առաջին Ողորմեան: Այս ժամերգությունը ուղղված է Ս. Հոգուն:

Վեցերորդ ժամին մարդը կերավ արգելված պտուղը և մերկացավ:

Քրիստոս վեցերորդ ժամին տարածեց իր ձեռքերը, խավարեցրեց արեգակն ու լուսինը և ճաշակեց լեղին:

Վեցերորդ ժամին կատարվում է Երկրորդ Ողորմեան: Այս ժամերգությունը ուղղված է Որդի Աստծուն:

Իններորդ ժամին նախամարդը անեծքը ստացավ և վտարվեց դրախտից:

Իններորդ ժամին Քրիստոս ավանդեց մարդկային հոգին:

Իններորդ ժամին կատարվում է Երրորդ Ողորմեան:

Երեկոյան սպառվեց լույսը, և խավարը ծածկեց երկիրն, ու մարդը ընկավ սատանայի լծի տակ:

Երեկոյան տեղի ունեցավ Քրիստոսի թաղումը:

Երեկոյան երբ մոտենում է գիշերը, կատարվում են գոհության և հանգստյան աղոթքները:

Գիշերային ժամերգությունը հիմնված է Ս. Գրական հետևյալ երեք վկայությունների վրա.

ա.— Դավիթ մարգարեի «Ի մէջ գիշերի յառնէի» (Սաղմ. ՃԺԸ 62) խոսքը:

բ.— Քրիստոսի հետևյալ խոսքը, թե «Արթուն կացէք, զի ոչ գիտէք, յորժամ Տէր տանն գայ, երեկոյին, եթէ ի մէջ գիշերի, թէ հաւախաւսին» (հմմտ. Մատթ. ԻԴ 42, ԻԵ 13):

գ.— Բանտում կեսգիշերին Պողոս առաքյալի և Շիղայի աղոթելու փաստի վրա (Գործք ԺԶ 25):

Առավոտյան ժամերգությունը նույնպես հիմնված է Տիրոջ խոսքի վրա. «...և ի հաւախաւսին, զոր Տէր իւր գալուստն ասաց»:

Իսկ **Արևագալի ժամերգությունը** հիմնված է Դավիթ մարգարեի «Ընդ առաւօտս կանխէի խուսանաւոր լինել» (հմմտ. Սաղմ. ԿԲ 7) խոսքի վրա:

Ինչպես նկատեցինք արդեն, սույն թղթում Հայ Եկեղեցու ժամերգությունները յոթն են. Երրորդ ժամի, Վեցերորդ ժամի, Իններորդ ժամի, Երեկոյան, Գիշերային, «Ի հաւախաւսին» և Արևագալի:

Այսօր, վերոհիշյալ ժամերգություններից բացի, Հայ Եկեղեցին ունի նաև Խաղաղական և Հանգստյան ժամերգությունները, որոնք իբրև առանձին ժամերգություններ չեն հիշվում Նչեցու թղթում: Սակայն կա մի ակնարկություն. Երեկոյան ժամերգության մասին Նչեցին ասում է. «Իսկ երեկոյին ի մօտ ել գիշերին զգոհութեան և զհանգստեան զաղօթսն»[10]: Արդյոք չի՞ կարելի եզրակացնել՝ ա. Նչեցու ժամանակ Արևելյան Հայաստանում դեռ վերջնականապես չէին տարածվել Ն. Շնորհալու և Ն. Լամբրոնացու կողմից կատարված հավելումները Խաղաղական և Հանգստյան ժամերգությունների վրա. բ. Այդ ժամերգությունները դեռ չէին առանձնացել, և գ. Դրանց նախնական հիմքը կազմում էր երեկոյան ժամերգության բաղկացուցիչ մասը:

Հայ Եկեղեցու ծեսի պատմության հարցերից մեկն այն է, թե եղե՞լ է ժամանակ, երբ բոլոր ժամերգությունները կատարվել են անխափան, ամեն օր: Նչեցու այս թուղթը տալիս է այդ հարցի պատասխանը՝ այո, միշտ, երբ մեր երկիրը խաղաղ ապրելու հնարավորություն է ունեցել: Սակայն երբ ճնշել են հալածիչները, և մեր ազգը ընկել է ծանր դրության մեջ, խափանվել է կարգ ու կանոնը: Նչեցին գրում է. «Սաստիկ նեղութիւն ոչ տայր թոյլ ըստ կարգի և ժամու աղօթել, այլ շփոթեալ և խառնեալ ամենայն կարգ և սահմանք, այլ փակեալ դրամբք և արտաքոյ ժամին կհոչակելի սուրբ պատարագն մատուցանէին առանց զգեստի և առանց արարողութեան: Զի վասն ծանր աղքատութեան զմարմնական պէտսն հայթելով լնուն, և զերկու և զերեք ժամու աղօթսն ի միասին կատարէին, զի փութով ի մարմնական պէտսն դառնային»[11]:

Սույն թղթում Նչեցին խոսում է նաև եկեղեցու և նրա բաղկացուցիչ մասերի (խոսքը քարեղեն տաճարի մասին է) խորհրդանշական իմաստի մասին:

Եկեղեցին Վերին Սիոնի դուստրն է և Անմահ Արքայի քաղաքը:

Եկեղեցու կառույցը խորհրդանշում է տիեզերքը.

Խորանը, «ուր սեղանն է, որ է պատկերն Յիսուսի, և մարմինն նորին բաշխի»,

[10] Մատ. № 5154, էջ 260բ:

[11] Անդ. էջ 260բ—261ա:

խորհրդանշում է երկինքների երկինքը, ուր «հանգուցեալ է» Աստվածությունը[12]:

Տաճարը, որ նախատեսված է մաքրակենցաղ և սրբակրոն անձանց համար, խորհրդանշում է հրեշտակների կայանը:

Իսկ **գավիթը** խորհրդանշում է երկիրը, որպեսզի երկնքից ընկած սատանան և դրախտից տարագրված մարդը այստեղ տեղափոխվեն՝ լի հոգեկան և մարմնական ցավերով և հիվանդություններով:

Նչեցին կարևոր տեղեկություն է տալիս տաճարի և գավթի գործածության մասին. «Ի ժամանակս յիշխանութեան մերոյ և խաղաղութեան վեսթ ժամն եկեղեցին կատարէին, բայց արժանաւորքն միայն մտանէին, և գաւիթն կայր ի սկզբանէ յառաքելոցն որ ապաշխարողաց տեղի, վի պախտացեալսն ոչ ընդունի Եկեղեցի, այլ ի ժամ ահաւոր խորհրդոյն՝ արտաքս հանէին ընդ ունկընդիրսն և սարկաւագն դռնապան կայր կարգած և կամ բնաւ ոչ տային թոյլ մտանել...[13]:

Այնուհետև Նչեցին նշում է, որ այս սովորությունը այլևս հնարավոր չէ պահել «վասն աղքատութեան և խստասիրտ տերանց մերոց, մանաւանդ վասն ծոյլ և հեղգացելոց անձանց և երկարել աղօթից...»:

2. Թուղթ Եսայեայ վարդապետին պատասխանի ընդդէմ պարոն Հեթմոյ.

Սույն գրությունը մեզ է հասել միայն երկու՝ Մատենադարանի № 9622 և 573 ձեռագրերով: Սրանցից չափազանց ընտիր օրինակ է № 573 ձեռագրինը (ԺԵ դ.): Սակայն № 9622-ը, գրված 1858 թ., ներկայացնում է ավելի ընդարձակ տարբերակ: Ըստ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի թուղթը գրված պետք է լինի հավանորեն 1321 թ.[14]:

Նչեցու սույն թուղթը մի նմուշ է մեզ հասած այն թղթակցություններից, որոնք տեղի էին ունենում ԺԳ դարի վերջերին և ԺԴ դարի սկզբին արևելյան վարդապետների և Կիլիկիայի կաթողիկոս Գրիգոր Անավարզեցու և իր լատինասեր քաղաքականությանը հարող իշխանությունների միջև: Սույն թղթով Նչեցին պատասխանում է Օշին Պայլի և նրա որդի Հեթումի նամակին: Թղթում խոսվում է երեք կարևոր հարցերի՝ ա. Քրիստոսի աստվածային և մարդկային բնության, բ. Հաղորդության բաժակի մեջ ջուր խառնելու սովորության և գ. Ծննդյան ու Մկրտության տոների կատարման օրվա մասին:

ա.— Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների միության հարցը պատկերում է հետևյալ կերպ. «...ձգեալ յինքն յարենէ ամենամաքուր կուսին, միացոյց ընդ աստուածութիւն իւրում անքնին և անճառ խառնմամբ»[15]: Այդ բնությունները անճառելի և հրաշափառ գերապանցյալ միությամբ առաջ բերեցին «մի Անձ, մի Որդի և մի Տէր»: Անճառ միավորությունից հետո չենք կարող ասել՝ Աստված, և հասկանալ Բեթղեհեմում ծնվածին, ոչ էլ կարող ենք «Որդի մարդոյ» ասել և հասկանալ երկնքից իջած Աստվածային Լոգոսին: Որովհետև ոչ լոկ մարդ էր և ոչ լոկ Աստված, այլ Աստված մարմնացած և մարդացած:

Այնուհետև Նչեցին խոսում է Արիոսի և Նեստորի հերետիկոսությունների մասին, ներկայացնում դրանց երևան գալու պայմանները և ապա տալիս Եկեղեցու ուղղափառ վարդապետությունը այդ հարցում:

բ.— Եսայի Նչեցին Հաղորդության Ս. բաժակի մեջ անապական ջուր խառնելու հարցը կապում է Քրիստոսի մարմնի անապականության հետ: Նա նախ հիշում է, որ բաժակի մեջ ջուր չխառնելու սովորությունը Հայ Եկեղեցին ստացել է Ս. Գրիգոր Լուսավորչից, այնուհետև մի շարք մեկնաբանություններով ապացուցում է բաժակի անապականության պարտադիր լինելը: Քրիստոսի մարմինը և արյունը անապական են: Եվ գինին խորհրդանշելով Քրիստոսի արյունը պետք է որ լինի անապակ, ինչպես և Քրիստոսի արյունը և մարմինն էր անապական: Ի հաստատումն առանց ջրի պատարագելու՝ Հայ Եկեղեցու սովորության, Նչեցին ասում է. «...որ Քրիստոս վայս խորհուրդ աւանդեաց եկեղեցւոյ իւրոյ ընդ չորեքեսին աւետարանչացն վկայութեամբ, գինի էառ ի ձեռս և ասաց՝ Այս է իմ արիւն, և ջուր բնաւ ոչ յիշեաց»[16]:

Այն եկեղեցիները, որոնք Հաղորդության Ս. բաժակի մեջ օգտագործում են գինի և ջուր, իբրև ապացույց են բերում այն դեպքը, երբ Քրիստոս խաչի վրա մահացած, վինվորը գեղարդով հարվածում է Փրկչի կողին և արյուն ու ջուր է հոսում:

Նչեցին, արտահայտելով Հայ Եկեղեցու տեսակետը, նշում է, որ այստեղ ջուրը Մկրտության խորհուրդն է նշանակում, իսկ արյունը՝ Հաղորդության: Այնուհետև Նչեցին ավելացնում է, որ այսպիսի մեկնություն է տալիս նաև Ս. Հովհան Ոսկեբերանը Հովհաննու Ավետարանի մեկնության մեջ. «Երկուց աղբերացն, որ ելին ի կողիցն Տեառն, շինեցաւ եկեղեցի, քանզի ջրովն

[12] Անդ, էջ 259բ:

[13] Անդ, էջ 261ա:

[14] Գարեգին արք. Հովսեփյան, անդ, էջ 256;

[15] Անդ, էջ 320ա:

[16] Անդ, էջ 317բ:

ծնանիմք վերստին աւազանաւն, և արեամբ սնանիմք ճաշակել կնա»[17]:

գ.— Խոսելով Քրիստոսի Ս. Ծննդյան և Մկրտության տոների մեկ օրում կատարելու Հայ Եկեղեցու սովորության մասին, Նչեցին շեշտում է, որ այդ ավանդական սովորությունն է և մինչև Նիկիայի Ա Տիեզերական ժողովը այդպես է եղել ամենուր: Սակայն Երուսաղեմում քանի որ հնարավոր չէր մեկ օրում Ս. Ծնունդը տոնել Բեթղեհեմում և ապա գալ Հորդանան գետը՝ Մկրտության տոնակատարությունը կատարելու, բաժանվեցին այդ տոները միմյանցից և Ս. Ծնունդը սկսեցին տոնել դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտության տոնը մնաց հունվարի 6-ին: Այս պատճառով էլ Ավետյաց տոնը ապրիլի 7-ից տեղափոխվեց մարտի 25-ը: Այս սովորությունը աստիճանաբար ընդլայնվեց և ընդունվեց մյուս տեղական եկեղեցիների կողմից:

Այնուհետև Նչեցին մեջ է բերում մի քանի ապացույցներ, որ հաստատում են Հայ Եկեղեցու ավանդության վավերականությունը:

3.—**Թուղթ Եսայեայ ի Տէր Մատթէոսն.**

Նչեցին այս թուղթը գրել է Թավրիզի առաջնորդ Տեր Մատթեոսին և Ատրպատականի ողջ հայությանը, նրանց ունիթոռական վտանգից պաշտպանելու համար:

Թուղթը մեզ է հասել երկու տարբերակով՝ ամբողջական[18] և թերի[19]: Վերջինս առաջացել է ընդարձակի ձեռագրից մեկ կամ երկու թերթ ընկած լինելու պատճառով:

Նչեցու այս թղթի նպատակն է զգուշացնել հայ հավատացյալներին կաթոլիկ քարոզիչներից՝ պատվիրելով նրանց «մի ամենայն հոգւոյ հաւատայք, որք ջանան թիւրել զճշմարտութիւն, զոր ի սուրբ Լուսաւորչէն մեր ընկալայք և ունիմք, և նա ի սուրբ հարցն գումարութենէ. որ ի Նիկիայ, առեալ մեզ աւանդեաց հաւատք Կաթողիկէ եկեղեցւոյ և դաւանութիւն ուղղափառ քրիստոնէից, զոր ասացեալ է Սրբոյն Աթանասի Աղեքսանդրու հայրապետին»[20]:

Նչեցին նախ շարադրում է Հայ Եկեղեցու ուղղափառ դավանությունը: Այնուհետև հարց է տալիս՝ բավակա՞ն է արդյոք միայն ճշմարիտ հավատքը մարդու փրկության համար: Նչեցին պատասխանում է՝ ոչ. «Ինչպես մեռեալ անդամ չէ ինչ պիտանացու ի գործ մարմնոյն, նոյնպէս և մեռեալ հաւատ, որ է առանց գործոց, ոչ տայ զօրութիւն հոգւոյն»[21]: Այստեղ Նչեցին հետևվում է Հակոբոս Առաքյալի հետևյալ մտքին. «Հաւատք եթէ գործս ոչ ունիցի, մեռեալ են առանձինն (Հակ. Բ 17):

Կենդանի հավատքը բաղկացած է երկու մասից. ա. Ուղղափառ դավանության խոստովանություն և բ. Քրիստոսավայել կյանքով ապրելու կամք և սեր դեպի բարի գործերը:

Նչեցին այնուհետև խոսում է քրիստոնյայի վարք ու բարքին վերաբերվող մի քանի օրենքների և առաքինությունների մասին: Հակականոնական է համարում պահքի ժամանակ ձուկ և գինի օգտագործելը, չորեքշաբթի օրը պահքը լուծելը:

Հետաքրքրական է Նչեցու վերաբերմունքը Կաթոլիկ Եկեղեցու հոգևորականների նկատմամբ: Նա իր գործը գրելով ունիթոռների վտանգից իր հոտը վերծ պահելու համար, թվում է, թե ատելությամբ պիտի լցվեր դեպի Կաթոլիկ Եկեղեցու մարդորսական քաղաքականությունը: Իր արտահայտությունների մեջ, սակայն, Նչեցին շատ հարգալից է: Քրիստոնյաների նկատմամբ սիրո մի վառ օրինակ է Նչեցու հետևյալ արտահայտությունը. «Իսկ ֆռանկաց, ի հռոմոց կամ յասորոց ապգէն վարդապետ կամ քահանայ և աշխարհական գան առ ձեզ, ամենայն պատուով ընկալջիք իբրև զեղբայրս և ծառայակիցս ի Քրիստոս և ուրախասջիք ընդ միմեանս, յաղագս միաբանութեան հաւատոյ և յուսոյն առ Քրիստոս»[22]: Սակայն Նչեցին այսհանջում է նաև փոխադարձ սեր և հարգանք. «Ապա թէ հպկառակութեամբ գնան ընդ ձեզ և կամին ջրջել ի յաւանդութենէ սուրբ հարցն և յառաջին վարդապետացն, մի ընդունիք զնոսայ իբրև զաջակերտ Քրիստոսի, այլ հակառակորդ ճշմարտութեան և գայլս ծածկեալ ստնով գառնեայ», որովհետև «Հայաստանեայցս կրօնք և աւանդութիւն ոչ խորթ է և կամ եկամուտ ոք յանջանից բերեալ, այլ յառաքելոցն և ի հարցն սրբոց»[23]:

Այնուհետև խոսում է մի շարք առաքելական ավանդությունների մասին, ինչպես օրինակ Ս. Ծննդյան տոնը հունվարի 6-ին կատարելու, անապակ բաժակով Ս. Պատարագ մատուցելու, և այլն, որոնք անխախտ պահպանվել են Հայ Եկեղեցում և ընդհակառակն փոփոխման ենթարկվել մյուս եկեղեցիներում: Այնուամենայնիվ Նը-

---

[17] Անդ, էջ 317ա:

[18] Մատենադարանի ձեռագրեր №№ 2776, 8245, 10008: Հր. Մ. Մսրյան, «Ճռաքաղ», Մոսկվա, 1860, էջ 157—164, 205—211:

[19] Մատենադարանի ձեռագրեր №№ 573, 485:

[20] Մատենադարանի ձեռագիր № 2776, էջ 235բ:

[21] Անդ, էջ 237բ—238ա:

[22] Մատենադարանի ձեռագիր № 2776, էջ 240բ—241ա:

[23] Անդ, էջ 241ա:

չեցին քրիստոնեաբար պատվիրում է. «Ի վերայ այսր ամենայնի գլխաւորելով զքանս աղաչեմ զամենեսին զձեզ դժուարաշարժ լինել ի վիճաբանութիւնս և ի կռիւս և դիւրաշարժ ի հաշտութիւն և ի խաղաղութիւն»:

Այնուհետև Նչեցին խորհուրդներ է տալիս Ս. Մկրտության, Պսակի և Ս. Հաղորդության մասին: Այս հատվածը կարևոր տեղեկություններ է տալիս ծեսի պատմության համար. օրինակ Նչեցին պատվիրում է նախ մկրտություն անել, որից հետո անպայման Ս. Պատարագ մատուցել՝ մկրտվածին հաղորդելու համար, կամ՝ կնքահայրը կարող է լինել ինչպես այր, այնպես էլ կին, միակ պայմանը քրիստոնյա լինելն է: Այնուհետև խոսվում է կնքահոր պարտականությունների մասին իբրև հոգևոր դաստիարակի:

Պսակը կարևոր հանգրվան է մարդու կյանքում և այն պիտի լինի հասարակության «տեսությամբ» և ոչ գաղտնի: Տղան պետք է նվազագույնը 15 տարեկան լինի, աղջիկը՝ 12: Այրը ավելի տարիքոտ պիտի լինի: Այնուհետև Նչեցին նշում է արենակցական աստիճանի մասին և թույլատրելի համարում չորրորդ աստիճանի ազգակցական ամուսնությունը միայն:

Պսակի արարողությունը կարող է կատարվել առավոտից մինչև կեսօր ժամանակահատվածում: Պսակադրությունը արգելվում է «ի բուն բարեկենդանի օրէ սկսեալ մինչև ցկատարումն պահոց շաբաթուն Պենտեկոստեին, ...յամենայն կիրակիս տարոյն և յութօրէք Խաչին և Ծննդեանն»[24]:

Ամեն մի քրիստոնյա պարտավոր է ամեն կիրակի խոստովանել և քառասուն օրը մեկ հաղորդվել: Նչեցին կտրականապես մերժում է խոստովանադրամ առնելը. «Քահանայ որ խոստովանադրամ առնու յԱստուծոյ դատի»[25]:

Ընդհանրապես Նչեցին դեմ է Ս. Խորհուրդները դրամով կատարելուն, որովհետև Ս. Խորհուրդների միջոցով քահանան Ս. Հոգու շնորհներն է բաշխում հաւատացյալներին: Այսպես Նչեցին պատվիրում է. «Մի ոք ըստ հարկի պահանջեսցէ գին արծաթոյ անգին շնորհն վասն մկրտութեան կամ մահու հաղորդելոյ, այլ որ ունին և տան, սիրով առէք որպէս զնուէր եկեղեցւոյ և աղքատացն օգնէք»[26]:

4.— **Թուղթ շրջաբերական յաղագս ողորմութիւն տալոյ ի նպաստ Ս. Կարապետին Տարօնոյ.**

Սույն գրությունը մեզ է հասել միայն մեկ՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 848 ձեռագրով (էջ 100ա—106բ), ընդօրինակված 14-րդ դարում:

Շրջաբերականի առաջին մասում ողջույնի խոսքերից հետո Եսայի Նչեցին նախ գովքն է հյուսում Հովհաննես Մկրտչի, ապա հիշատակում, որ Հովհաննես Մկրտչի նշխարները «իբրև զգանձս երկնային և զարգևս անմահութեան»[27] Հայաստան է բերել Ս. Գրիգոր Լուսավորիչը և ամփոփել Տարոնում՝ «ի սիրտ Հայաստան աշխարհիս»[28], որոնց պահպանության համար էլ կառուցել է գեղեցիկ շինություններ և հիմնել վանք[29]: Եսայի Նչեցին ասում է, որ Ս. Հովհաննես Մկրտչի նշխարները և նրանց վրա հիմնված սուրբ ուխտը հանդիսանում են Հայաստան աշխարհի բոլոր բարիքների պատճառը: Այս նույն մտայնությամբ է Նչեցին բացատրում նաև այն, որ հայազգի կավակների բաղում մեղքերի պատճառով այժմ ս. ուխտը «բաղում նեղութիւնս կրէ և տոյժս ի ձեռաց այլազգեաց»[30]: Այնուհետև հեղինակը դիմում է ժողովրդին նյութական նվերներով օգնելու և զորավիգ կանգնելու Ս. Հովհաննու Կարապետի վանքին:

Նամակի երկրորդ մասում Նչեցին ուսուցողական նպատակով խոսում է ուղիղ ճանապարհով ապրելու մասին և հատկապես կենտրոնանում հարբեցողության վնասների վրա: Նչեցին հարբեցողությունը նույնպիսի մեղք է համարում, ինչպիսին պոռնկությունն ու գողությունը:

Նչեցու ժամանակ շատերը արդարացնելու համար իրենց խմելու մոլուցքը, պատճառաբանում էին, թե մեկը խմելով չի գողանում կամ շնանում կամ սպանում: Սակայն Նչեցին գտնում է, որ եթե մեկը խմի և սպանի, ոչ թե մի մեղք գործած կլինի, այլ երկու՝ հարբեցողություն և սպանություն: Այսպիսով հարբեցողությունը, որ ինքնին կարող է ոմանց կողմից մեղք չընդիտվել, սակայն բազմաթիվ մեղքերի պատճառ կարող է դառնալ: Նչեցին խոսում է նաև այն վնասների մասին, որ հասցնում է խմիչքը մարդկային մարմնին. «ոչ միայն զոգիս ապականեն արբեցողացն զեղխութիւնք, այլև զմարմինն փտեն և ապականեն գինոյն նեխութիւնքն, և ազգի ազգի ցաւս ի մարմին արկանեն՝ զսիրտն մեղկէ, զմարմինն թուլացուցանէ, զստամոքսն խանգարէ, զուղեղն ապականէ, զտեսանելիսն

[24] Անդ, էջ 246բ—246գ:
[25] Անդ, էջ 246զ:
[26] Անդ, էջ 244ա—244բ:
[27] Անդ, էջ 100բ:
[28] Անդ, էջ 101ա:
[29] **Ագաթանգեղոս**, Պատմություն հայոց, 810, աշխ. թարգմ. Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1977, էջ 130:
[30] Մատենադարանի ձեռագիր հմր. 848, էջ 101բ:

վիճացուցանէ, որոց բաղում անգամ ըստ սիրտն նեղեն և չարամահ սպանեն»[31]: Այս վնասներից շատ ավելի ծանր են, սակայն, հոգեկան վնասները. «Իսկ զոգոցն ցաւուց զի՞նչ ասասցուք, կամ ո՞ր բերան բաւական է պատմել կանանարին աղետսն, որ ի դատաստանի մեծի ահեղ աւուրն յայտնելոց է. անողորմ տանջանք և անսերելի պապակումն...»[32]: Ըստ Եսայի Նչեցու Աստված մարդուն ստեղծել է բանավոր և իմաստուն, սակայն մարդը արբեցությամբ հիմարանում է, դադարում մարդ համարվելուց և անասունների կարգը դասվում. «Զի թէպէտ և մարմին է արբեցողացն, ձեռքն ի գործոց դադարեն, ոտքն ի գնացից, լեզուն ի խօսից է համրացեալ, լսելիքն ի լսելոց են խլացեալ, աչքն ի տեսանելոց են կուրացեալ, սիրտքն յիմաստութենէ յիմարեալ...»[33]: Անշուշտ Նչեցին քաջ գիտակցում է, որ գինին ճաշակելը ինքնին մեղք չէ, այլ այն չափից ավելի օգտագործելը: Գինին տրվել է մարդկանց «ի պէտս հիւանդաց և սգաւորաց և յուրախութիւն այնոցիկ, որ ի տրտմութեան իցեն»[34]: Սակայն այն չարաշահելն արդեն մեղք է: Եզրակացնելով, Նչեցին շեշտում է, որ արբեցողությամբ ըստ բաղվողները անկասկած պիտի ենթարկվեն դժոխքի տանջանքներին: Հետևաբար Նչեցին հորդոր է կարդում ժողովրդին ապրելու կյանքի ուղիղ ճանապարհով, այն ճանապարհով, որ թելադրում է Ս. Օրենքը:

---

31 Անդ, էջ 103բ: Հմմտ. Մանդակունու ճառը:
32 Անդ, էջ 104բ:
33 Անդ, էջ 105ա:
34 Անդ: